«Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի
տնօրեն Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ 06949156)
Ք. Վանաձոր Աղայան փ. 72

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հանրապետության նախագահի աշխատակազմի և Ձեր ընկերության միջև 26.03.2021թ.-ին կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով «Պետության կարիքների համար ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման» գնման պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված ջեռուցման կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունները Ձեր ընկերության կողմից չեն մատուցվում: Ձեր ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը:

Հանրապետության նախագահի աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանումը 15.10.2021թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված գրությամբ Ձեզ հայտնել է, որ մինչև 18.10.2021թ.-ը պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը (պահանջվող չափով) չիրականացնելու դեպքում պատվիրատուի ղեկավարին կներկայացնի պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկ: 20.10.2021թ.-ի Ձեր պատասխան գրությամբ հայտնել եք, որ կորոնավիրուսի համաճարակի և աշխատակիցների առողջական վիճակի պատճառով չեք կարող շարունակել կատարել պայմանագրով սահմանված պարտականությունները: Ընդ որում Ձեր կողմից չի առաջարկվել ծառայությունների մատուցման նոր ժամկետ, այնինչ ջեռուցումը մեկնարկելու համար անհրաժեշտություն կա անհապաղ սկսել ծառայությունների մատուցումը:

Հայտնում ենք Ձեզ, որ պայմանագիրը կնքվել է նույն կորոնավիրուսի համավարակի պայմաններում, և Ձեր ընկերությունը պարտավոր էր հաշվի առնել այդ ռիսկերը և պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու համար նախապես ձեռնարկեր համապատասխան միջոցներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և պայմանագրի 2.1.3 կետի «բ» պարբերությունը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը 22.10.2021թ.-ին մասնակի՝ 529,834 (հինգ հարյուր քսանինը հազար ութ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է Հանրապետության նախագահի աշխատակազմի և «Ալեքսանդր-Մ» ՍՊԸ-ի միջև 26.03.2021թ.-ին կնքված ՀՆԱ-ԳՀԾՁԲ-21/22 ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ձեր ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովումների համար ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը համապատասխան վճարման պահանջագրերով ներկայացվում է Ձեր ընկերությանը սպասարկող բանկին, իսկ Ձեր ընկերության տվյալները ուղարկվում է լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով:

Հանրապետության նախագահի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ ԽՈՒ.ՊՈՂՈՍՅԱՆ
22.10.2021